ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/636/2024-2025-1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **15 հոկտեմբերի 2025թ.**

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հոկտեմբերի 15-ին քննելով ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանի կողմից 2022 թվականի պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/636/2024-2025-1 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը**

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով պարզել է, որ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանի Հայտարարագիրը հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունվարի 15-ին Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանին գրավոր ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը:

Նշված ծանուցումը Սեյրան Հովհաննիսյանի կողմից ստանալու վերաբերյալ հավաստող փաստ Հանձնաժողովը չի ստացել:

1.3 Հանձնաժողովի կողմից Հայտարարագիր ներկայացնելու պարտականության վերաբերյալ ծանուցումը 2024 թվականի սեպտեմբերի 18-ին թիվ 01/2957/104-2024 գրությամբ Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո 31-րդ օրը, ժամը՝ 14:00-ին ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն:

Նշված ծանուցումը Սեյրան Հովհաննիսյանի կողմից ստանալու վերաբերյալ հավաստող փաստը Հանձնաժողովը չի ստացել:

1.4 Սեյրան Հովհաննիսյանի Հայտարարագիր ներկայացնելու պարտականության վերաբերյալ ծանուցումը 2024 թվականի սեպտեմբերի 19-ին թիվ 01/2974-2024 գրությամբ ուղարկվել է ՀՀ Ներքին գործերի նախարարին՝ խնդրելով փոխօգնության կարգով ծանուցումը տրամադրել Սեյրան Հովհաննիսյանին: Նշված ծանուցումը Սեյրան

Հովհաննիսյանին է հանձնվել 2024 թվականի հոկտեմբերի 3-ին, սակայն վերջինս «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետում, ինչպես նաև դրանից հետո՝ 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացրել Հանձնաժողով:

1.5 2024 թվականի նոյեմբերի 5-ին պատշաճ ծանուցված Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/722/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.6 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի ապրիլի 16-ին Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանին է հասցեագրվել թիվ 01/1595-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին ներկայանալ Հանձնաժողով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար:

1.7 Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանը 2025 թվականի ապրիլի 22-ին ստացել է ծանուցագիրը՝ (հիմք AL0127510397AM անդորրագիրը):

1.8 Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի կարգավորումները՝ 2025 թվականի ապրիլի 25-ին և օգոստոսի 28-ին թիվ ՎԻՎ/636/2024-2025-1 և ՎԻՎ/636/2024-2025-2 որոշումներով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցրել է՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ վարույթի մասնակցից պարզելու համար:

1.9 Սույն վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողովը ձեռնարկել է անհրաժեշտ և հնարավոր միջոցներ՝ պարզելու և գնահատելու վարույթի մասնակցի կողմից Հայտարարագիր չներկայացնելու պատճառ հանդիսացած հանգամանքները՝ վարույթի փաստական հանգամանքներն ամբողջական և օբյեկտիվ պարզելու նպատակով:

Վարույթի մասնակցի հետ ունեցած հեռախոսային հաղորդակցության ընթացքում վերջինս տեղեկացրել է, որ Հայտարարագիրը չի կարող լրացնել և ներկայացնել Հանձնաժողով, քանի որ չունի և չի տիրապետում ժամանակակից տեխնիկական միջոցներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը վերսկսել է թիվ ՎԻՎ/636/2024-2025-1 վարույթը և 2025 թվականի հոկտեմբերի 15-ին նշանակել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

1.10 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 23-ին Սեյրան Հովհաննիսյանին է հասցեագրվել թիվ 01/3620-2025 գրությունը՝ առաջարկելով 2025 թվականի հոկտեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին, ներկայանալ Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու նպատակով:

Նշված փոստային ծանուցումը Սեյրան Հովհաննիսյանը չի ստացել, և այն Հանձնաժողով է վերադարձվել 2025 թվականի հոկտեմբերի 6-ին չպահանջված նշումով (հիմք՝ AL0129695194AM անդորրագիրը 2025 թվականի հոկտեմբերի 3-ի ետ վերադարձ՝ CN15), որից հետո հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի 14-15-րդ մասերի դրույթները՝ վերոնշյալ ծանուցումը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում:

1.11 2025 թվականի հոկտեմբերի 15-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Սեյրան Հովհաննիսյանի բացակայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի մասնակցի հետ ունեցած հեռախոսային հաղորդակցության ընթացքում վերջինս տեղեկացրել է, որ հայտարարագիրը չի կարող լրացնել, քանի որ չունի և չի տիրապետում ժամանակակից տեխնիկական միջոցներին:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/636/2024-2025-1 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված պաշտոնատար անձի 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.2 Սեյրան Հովհաննիսյանը պաշտոնեական պարտականությունները դադարեցրել է 2022 թվականի հոկտեմբերի 6-ին:

3.3 Գործի քննության օրվա դրությամբ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանի Հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Վարչական վարույթի ընթացքում Սեյրան Հովհաննիսյանի կողմից Հանձնաժողով դիրքորոշում չի ներկայացվել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանը Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված

հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ Վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած

հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը արձանագրում է, որ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքով 2022 թվականի պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա Հանձնաժողով չի

ներկայացրել, այն է՝ թույլ է տվել Օրենսգիրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը, որը տվյալ դեպքում խաթարվել է՝ Սեյրան Հովհաննիսյանի կողմից Հայտարարագիր չներկայացնելու արդյունքում՝ մասնավորապես, Հայտարարագիր չներկայացնելու արդյունքում պաշտոնատար անձի ընդհանուր գույքային դրությունը, շահերի բախման հնարավոր իրավիճակները Հանձնաժողովին և հանրությանը հասանելի չի դարձել, այդպիսով չի ապահովվել պաշտոնատար անձի գործունեության թափանցիկությունն ու նրա հաշվետվողականությունը:

Անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից հեռախոսազանգի միջոցով ներկայացված պարզաբանմանը, համաձայն որի՝ վերջինս չի կարող ներկայացնել հայտարարագիրը, քանի որ չունի և չի տիրապետում համապատասխան ժամանակակից տեխնիկական միջոցներին, Հանձնաժողովը կարևոր է համարում նշել, որ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը կրում է իմպերատիվ բնույթ:

Միաժամանակ, Հանձնաժողովը կարևոր է համարում նշել, որ Օրենսդիրը հայտարարագիր ներկայացնելու համար հստակ ժամկետ է սահմանել (պաշտոնի դադարեցման հայտարարագիրը Հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական

պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով), որի նպատակը հայտարարատուի կողմից օրենքով սահմանված պարտականության պատշաճ և ժամանակին կատարումն ապահովելն է: Այսպիսով հայտարարագրման ենթակա տվյալները ժամանակակից տեխնիկական միջոցներին չտիրապետելու և չունենալու հիմքով չներկայացնելը չի կարող դիտարկվել որպես հայտարարագիր չներկայացնելու օբյեկտիվ պատճառ, քանի որ հայտարարատուն կարող էր դիմել Հանձնաժողովին կամ այլ անձանց օգնությանը հայտարարագիրը ներկայացնելու համար, ինչը չի արել:

Ուստի, հայտարարատու պաշտոնատար անձը պարտավոր է ապահովել հայտարարագրի ներկայացումը՝ անհրաժեշտության դեպքում ձեռնարկելով օրինական բոլոր միջոցները հայտարարագիրը ներկայացնելու համար: Հետևաբար, Սեյրան Հովհաննիսյանի կողմից ներկայացված պարզաբանումը չի կարող հիմնավոր համարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանը ենթակա է վարչական պատասխանատվության Օրենսգիրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող, ինչպես նաև 33-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով 2022 թվականի պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի,

եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն սահմանված կարգով Սեյրան Սերյոժայի Հովհաննիսյանին հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ